

Музыкальный

Учебный словарь

891.99

7-19

19 NOV 2011

91.542-3

7-20

2894

XVI, 17.

ԱՐԳԵՐ ՊԱՅՏԱԶԱՏ

ԱՐՆԱԹԱՂԻԿ

(ԷՍՔԻԶ)

ԳԻՆՆ Է 10 ԿՈՊԵԿ



Թ Ի Յ Լ Ի Ս

Էլեքտրաշարժ տպարան «ԷՍՊԵՐԱՆՏՕ» Ելիզ. 17.

1913

ԱՐԴԱՐ ՊԱՅԱՋԱՏ

7180
391.99
7-19
այ

ԱՐՆԱԹԱՂԻԿ

(ԷՍԻԶ)



Թ Ի Յ Լ Ի Ս
Էլեքտրաշարժ տպարան «ԷՍՊՆԵՐԱՆՏՕ» Ելիզ. 17.
1913

58374

0815

3978

~~1894~~

2894

17 JUL 2013

99464

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՊՐԵՍՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ

2 0 6

Ի յիշատակ Շուշու Թեմական դպրոցի Եօթա-
նասուն եւ հինգամեայ Յօրելեանի, հրատարակելով
այս փոքրիկ էսքիզս, նւիրում եմ սրտանց իմ ու-
նեցածից ամենաթանկագինը այն Հիմնարկութեան,
ուր աշխարհիս չարն ու ըարին գիտակցելուց յետոյ
կեանքի պայքարում ենթարկեցի անվերջ հալածան-
քի, սակայն ամուր բռնած ՊԱՊԻԿԻ ինձ տաած դրօ-
շակը, փնտրեցի կեանքի իմաստը ոչ թէ ոսկի ու ար-
ծաթ դիզելուն՝ այլ մտքի հզօր որոնումները իրակա-
նացնելուն մէջ այս անհասարար աշխարհում...

Խորին Յարգանքով

Երոխապատս Գալսիկն սան՝

Ա.ԲԳ.Ս.Բ ՊԱՅԱՋԱՍ.

ՄՐՑ

ԱՐՆԱԾԱՂԻԿ

Է ս ք ի գ

I

—Купите цвѣтки, купите цвѣтки, молодой человекъ! Թ. բաղաբի կենտրոնական Ե. հրապարակում դեռափթիթ մի օրիորդ ժպտալով դիմեց դանդաղ անցնող, երեսուն տարին նոր բոլորած, բաւականին զբաւիչ արտաքինով, թուխ, թուխ խոշոր աչքերով, բարձր հասակով մի երիտասարդի, որ նոր վերջացրել էր աշխատանքը զրասենեակում, ուր հասարակ զրազրի պաշտօն էր վարում, փողոց դուրս եկել, որ ճաշարան գնար ճաշելու:

Գրասենեակից դուրս գալուն պէս, այն մտքի մէջն էր, թէ այս անգամ սրտեղից ճաշի փողը պիտի վճարէր, որովհետեւ ամսավարձը վաղուց ստացել, դիւզն էր ուղարկել հիւանդ մօրը: Այդ հարցի մէջ խորասուզած աշխատում էր տանելի մի ելք որոնել, որովհետեւ շատ անգամ օրերով քաղցած էր մնացել, ոչ մէկից ոչ մի կոպէկ չէր խնդրել դէմ լինելով այդպիսի օգնութիւնների, որի հիմնաքարը խղճալն ու ցաւակցելն է, որ լսեց օրիորդի զանգակ ձայնը: Կանգնեց,

Երիտասարդը նորից զննելով նրանց ոտից ցզլուխ, պատասխանեց սառնութեամբ:

— Ճշմարտութեան կուրծքին յաւիտենական նիգակն է ցցւած... Ես այդ դիտեմ. բայց որովհետեւ դուք շօշափում էք մի խնդիր, որի մասին մեր հայեացքները արմատականօրէն տարբերուում են իրարից, կը խնդրէի տեղ որոշէք, որ մենք բացատրենք: Դուք ինձ վերաւորեցիք, ստիպւած եմ ես էլ ձեզ վերաւորելու, որովհետեւ այսպիսի դէպքերում քրիստոնեայ կամ ջենտլմէն լինելուց շատ հեռու եմ:

Նրա սառն և վճռական առաջարկութիւնը շփոթեց օրիորդներին ու նրանք սկսեցին իրար նայել:

— Չըկասկածէք, որ մեր հանդիպումը կը վարկաբեկէ ձեզ, շարունակեց նա, նրանց շփոթութիւնից օգտուելով:— Եւ այս՝ սիրոյ բանդէու էլ լինել չի կարող, որովհետեւ նախ ես աղքատ եմ, երկրորդ՝ ինքս էլ այլ ես սիրել չը գիտեմ: Ներկայ պայմաններում ոչ ոք էլ չի սիրում, նամանաւանդ քնքոյշ սեռը... Ներկայ կիներ սօցիալական պայմանների գոհն է ու խաղալիք՝ հաց ունեցող արուների ձեռքին...

Օրիորդները լուռ լուռ էին նրան ու զարմանում, որ նա խօսում էր կարծես վաղեմի ծանօթների հետ, ուստի իրենք էլ իրենց հերթին մտան երիտասարդի դերի մէջ և զգացին ազատ:

— Ուրեմն ցանկանում էք, մենք էլ ձեր սկզբունքը դաւանե՞նք. ընդհատեց նրան արկղակիր օրիորդը:

— Ամենևին. գուցէ ես մոլորւած եմ. կուզենայի, որ ինձ ուղիղ ճամբան ցոյց տար, որ ես էլ ձեզ նման վաղը մի արկղ վերցրած փող ժողովեմ թոքախտաւորների, քաղցածների ու թշուառների օգտին:

— Ինչպէս երևում է, դուք մեզ ծաղրում էք. շարունակեց արկղակիր օրիորդը, որի կապոյտ խոշոր աչքերը բևեռել էին արդէն երիտասարդի աչքերին:

— Ոչ, օրիորդ, երդւում եմ ազնուութեամբ. ոչ պատասխանեց նա մեզմ ու սիրալիւր ձայնով, նրա կրակոտ հայեացքի մէջ կարդալով սէք, կիրք, ու բարկութիւն... — Ոչ, ես ցանկանում եմ, քարացած սիրտս փափկացնէք. կեանքը նրան քարացրել է:

— Գուցէ դուք հիւանդ էք, նկատեց օրիորդը կարեկցող ձայնով:

— Ոչ, ես հիւանդ չեմ. բայց ինձ նման հազարաւորները տառապում են այդ անիծեալ թոքախտի ճիրաններում, որ բաժին են ստացել գործարանների խոնաւ ու գարշահոտ նկուղների մէջ... Էլ չեմ ասում այն լէգէօնների մասին, որ ստիպւած ապրելով էժանագին գետնայարկերում ու այդ թոքախտն ստանալով մեռնում են անյայտութեան լաբրինթոսում...

— Եւ մենք ուզում ենք այդպիսիներին օգնել: Վրայ տւին երեք օրիորդները միասին ուրախացած, յաղթութեան համար յարմար հող գտնելով նրա ասածների մէջ:

— Վերջապէս հասկացէք ինձ. ջերմախտ տարածող ճահիճը պէտք է ոչնչացնել, ոչ թէ թոյլ տալ նա նեխւի, և անվերջ վարակի մարդկանց: Միլիոնաւորները հէնց այժմ մերկ ու քաղցած տառապում են մութ ու խոնաւ նկուղներում, իսկ դուք ուժեղների ստեղծած այդ դժոգքից հանած կմաղքների բժշկութեամբ էք զբաղւած: Սակայն երբեիցէ այդ ուրական մարդկանց թիւը կը պակասի... Հաւատացէք, օրիորդներ, արսուրդ է այդ. նպատակի երբէք չէք հասնի: Դուք խաբւած

ու մոլորեաձ էք հզօրների ստեղծագործած մետաքսահիւս ոստայնում ջրտուղ սարգային մօրալից ու օրէնքներից, որ ամբողջ կեանքը ցանցել ու արեան զանգւած է դարձրել... Անհրաժեշտ է, հէնց այդ զանգւածը ջախջախել, ինչպէս թունաւոր իժի գլուխը և ազատել մարդկութիւնը այդ իժերի սոսկալի թոյնից... Դա է փրկութեան միակ ճամբան...

Երիտասարդը տաքանալու վրայ էր, որ մօտեցաւ նրանց մի աղքատ կին լաթերի մէջ փաթաթած թոյլ ու վտիտ մի մանուկ գրկին, իսկ ետևից՝ չորս ու հինգ տարեկան երկու երեխաներ՝ ցնցոտիների մէջ: Կնոջ պատուտած հագուստների ձևները փողփողում էին բարակ քամու հոսանքով ու ցոյց տալիս արևից այրւած ու կեղտից սևացած նրա մերկ բազուկներն ու ազգրները: Գրկի մանուկը գերեզմանից հանած դիակի էր նման, իսկ ետևից գլխիկոր քայլող երեխաները հազիւ էին պահում իրենց նիհար ու կմաղք մարմինները ճիպոտ դարձած մերկ ու բորիկ ոտների վրայ:

— Ողորմութիւն արէք. աղերսեց այդ կինը: — Սրանց հայրը երկար ժամանակ անգործ մնալուց յետոյ այժմ պառկած է հիւանդ: Երեխաներս մանր են. չեմ կարողանում աշխատանքի գնալ: Ոչ ոք ինձ ծառայութեան երեխաներով չի ընդունում: Տանը վարձը վճարել չէինք կարողանում. չոր սենեակից մեզ դուրս արին: Էժման նկուղ վարձեցինք: Ա՛խ, անիծւի այդ օրը... Խոնաւ նկուղը վերջնականապէս ամուսնուս նետ եց մահիճը: Նա տանջուում էր: Երեխաները չոր հաց էին ուղում. իսկ մեր տանը հացի հոտը վաղուց էր կտրուել: Նա վճռեց ինքնասպան լինել: Ես նրա թուղ կըտրեցի, ազատեցի երեխաներիս միակ կերակրողին, իսկ

նա այժմ ամեն օր անիծում է ինձ, տրտնջալով, որ նրա տանջանքն աւելի մեծացրի, որ երեխաներիս համար ողորմութիւնով հաւաքած հացի կտորներին ընկեր դարձրի.

— Բժիշկն անփող չի դալիս: Նա թոքախտ ունի: Վա՛յ իմ սև օրին... Բարեգործական ընկերութեան շէմքը մաշել եմ. միայն Զատկին երեք ըուրլի տւին: Խնչ կարող էի անել դրանով ծով դարդերիս մէջ: Թաթախման գիշերը մենք քաղցած էինք... Այն երեք ըուրլին դեղերի ու բժշկի տւի:

Ու նրա աչքին փայլեցին արցունքի խոշոր կաթիլներ ու ոլորւելով աչքի աղբերակներում, կաթիլթեցին մանկան մերկ թաթիկների վրայ, որ նրանց տաքութիւնը զգալով մանուկը, մինչ այն փակած աչքերը բացեց, և ցոյց տաւ նրանց իր աչքերի մէջ կատարուող կեանքի և մահու պայքարը. նրա աչքերը խաւրում էին արդէն...

— Ամուսինս լաւ արհեստաւոր էր. շարունակեց նա արցունքը կուլ տալով: — Նա թոյլ չի տալիս մուրալու: Նա ձեռք չէ տալիս իմ տարած հացի փշրանքներին...

— Նա մեռնում է քաղցած...

Կինն սկսեց այս անգամ հեկեկալ, իսկ երեխաները նայելով սիրելի մայրիկի աչքերին սկսեցին լուռ զլորել փայլը կորցրած աչքերից արցունքի խոշորիկ կաթիլներ նիհար ու գունատ այտերի վրայ:

Օրիորդները սոսկալի այս պատկերի առաջ կարծես քարացել էին: Նրանք մերթ այդ կնոջն էին նայում, մերթ երեխաներին, որ վիզը ծուռ նայում էին մօրը և իրենց թափած արցունքով կարծես նրան մխի-

թարել էին ուզում, մերթ երիտասարդին և հետզհետէ սկսում հասկանալ պարոնի տարօրինակ հայեացքները:

— Պարոն, դարձաւ արկղակիր օրիորդը երիտասարդին. — Լինենք ծանօթներ, օր. Ամալիա Միլինեան. ես այժմ ձեզ հասկանում եմ, ու ձեռքը մեկնեց երիտասարդին:

— Բազիլեան, պատասխանեց երիտասարդը թոթովելով նրա ձեռքը:

— Մեր տեսակցութեան տեղը թողէք լինի այս խեղճ կնոջ նկուղը. շարունակեց օր. Միլինեանը ապա հարցնելով այդ կնոջ հասցէն, հեռացաւ ընկերուհիների հետ, որոնք նոյնպէս ցանկութիւն յայտնեցին միանալ նրանց գործին:

II

Ժամադրութիւնից վաղ գնաց Բազիլեանը: Նըրանք խօսք էին տւել իրար հանդիպել բուսարանական այգուն կից գտնուող փողոցի վրայ, որտեղից մօտ էր և այն կնոջ բնակարանը:

Ճանապարհին էլեքտրաքարշում հանդիպեց արկղակիր օրիորդին:

— Օրիորդ Ամալիա, ձայն տւաւ Բազիլեանը մօտենալով:

— Ա՛, պ. Բազիլեան, այդ դձեք էք. դուք էլ ինձ նման վազել էք. խնդրեմ: Մենք այնտեղ սարի լանջին, մինչև նրանց գալը, քիչ էլ կզբօսենք:

Սլանում էր վազօնը:

— Զարմանալի ծայրայեղութիւններ: Ոտեց Բազիլեանը առանց նայելու օրիորդին: — Նայեցէք այս

նստոտած տիկիներին, օրիորդներին, նրանց հսկայական ծալփեղոյրներին, թանկագին հագուստներին, ահա և այս պարոններին, որ ժպտում են ինքնագոհ ու սրանց բոլորի կուրծքներին կայցրած սպիտակ ծաղիկներին... Սրանք արդէն կատարել են իրենց քաղաքացիական պարտքը...

— Չէ՞ որ սպիտակ ծաղկի տօնն է... միջամտեց օրիորդը:

— Արեան կաթիլների... Ընդհատեց Բազիլեանը:

— Դուք շատ էք սւինում: Այդպէս դիւրին չէ փոխել կեանքի ընթացքը: Նկատեց օրիորդը ժլպտալով:

Երթեկները խանգարեցին նրանց նոր սկսած խօսակցութիւնը. ստիպւած էին լուել: Երթեկեկող կանանցից մէկը մեծ աղմուկ էր բարձրացրել, թէ ինչո՞ւ կօնդուկտօրը նրա ականջի մօտ հնչեցրեց չւելու շեփօրը, որի խրպոտ և անտանելի ձայնը իբր թէ նրան քիչ ֆնաց ուշաթափութեան հասցնէր:

Օր. Ամալիան արդէն քսան և երեք տարեկան էր: Երեք տարի առաջ աւարտելով տեղական իգական գիմնազիան, գնացել էր Պետերբուրգ բարձր դասընթացքներ լսելու, բայց ուսանողների շարժումների պատճառով փակւեցին բոլոր համալսարանները, ուստի նա ստիպւած վերադարձաւ հայրենիք: Նրա ծնողները քաղաքի յայտնի հարուստներիցն էին: Կարիքի մասին նա գաղափար չուներ. զիտէր միայն դրա թէօրիան: Ընթերցասէր էր. կարգացել էր բազմաթիւ զբեր: Վէպերի մէջ շատ էր հանդիպել ծայր աղքատութեան ու չքաւորութեան նկարագրութիւններին,

ցաւել, յուզւել, բայց շուտով էլ մոռացել, իսկ այսօր նրա տեսած պատկերը սիրտը ճմլեց:

Նա այժմ մտածում էր Բագրիւկանի և նրա տարօրինակ մտքերի մասին ու աշխատում ըմբռնել նրանց: Նա արդէն տեսնում էր նրա հայեացքների մէջ ճշմարտութեան աղօտ լոյսը, բայց չէր կարողանում ընդգրկել: Մտքի այդ պայքարի մէջ նա յիշեց իր շրջանի հարուստ ու պճնազարդ երիտասարդներին, համեմատեց նրանց մէկ մէկ Բագրիւկանի հետ ու տեսաւ, որ ահագին վիճ կայ նրանց և սրա մէջ:

Իսկ Բագրիւկանն էլ ստէպ նայելով այդ գեղեցիկ օրիորդին, աշխատում էր նրա հոգու խորքը թափանցել ու հասկանալ նրան, որ գոնէ վերջին անգամ չը մնար մենակ...

Միջնակարգ դպրոցից սկսած, վերջացրած համալսարանով, նա միշտ տարւած էր եղել սօցիալական գաղափարներով ու մնացել բացառութիւն՝ ընկեր բժիշկների, ինժեներների ու իրաւաբանների մէջ ու հասել ծայրայեղ չքաւորութեան ենթարկւելով ծաղրի, հալածանքների ու բանտերի: Նրա նախկին բոլոր ընկերները անհատական բարեկեցութեան մէջն էին որոնում կեանքի իմաստը, իսկ սա՛ հանուրի, ուստի և նա մնաց միշտ մենակ: Նրա մենակութիւնն աւելի սոսկալի դարձաւ, երբ կեղծ անցադրով եկաւ Թ. քաղաքը ու մտաւ հասարակ գրադրի պաշտօնով առևտրական մի գրասենեակ: Նա ստիպւած էր ծածկել իր դիպլոմը, հակառակ դէպքում անխուսափելի էր ձեռքալուծութիւնը: Նա քաղաքական մեղադրեալ էր:

Նրանք երկուսն էլ իրենց մտքերի մէջ խորասուզւած հասան քաղաքի ծայրը, իջան էլէքտրաքար-

շից ու սկսեցին լուռ բարձրանալ դիմացի սարը: Արդէն երեկոյեան ժամի 7-ն էր: Մինչև նրանց գալը դարձեալ երկու ժամ կար: Հասան լեռան գագաթը: Նրանց առջև բացւեց հրաշալի տեսարան: Ներքևում տարածւող հսկայական քաղաքը բազմահազար լապտերներով ու տների պատուհաններից միլիօնաւոր լամպաների լոյսի ցոլացումներով նմանում էր ձմեռային աստղազարդ ջինջ երկնքին: Դէպի արևելք տարածւում էր մի վիթխարի հարթավայր, որը հորիզոնից բարձրացող լուսնի արծաթաշող թեք շիթերի տակ փոխւել դարձել էր խաղաղ ու մուշ ժի անապատ:

Ամալիան նայեց դէպի քաղաք, դէպի այդ հսկայական հարթութիւնը, դէպի աստղազարդ երկնքը, բոլորւած լուսնուն, որի խաղաղ ու գունատ դէմքի վրայ այդ պահուն խաղում էին ճերմակ ամպի մի քանի քուլաներ, կանգ առաւ և ասաց:

—Նստենք այս նստարանին. դեռ վաղ է:

Նրանք նստեցին լեռան ոլորտապոյտ կածանի երկարութեամբ մի քանի տեղ շինւած նստարաններից մէկի վրայ:

Նրանք լուռ էին, ինչպէս նրանց չորս կողմից իջնող սև խաւարը: Փչում էր բարակ քամին, սոսափում տերևներ, թփերից լուռ զեռունների ու միջատների շվշվոց ու ձկձկոց, սաղարթախիտ ծառերի իրար ծափող տերևների շրշիւն, հեռու գաճուկ լճակի միջից կռկռացող գորտեր:՝ ականջ ծակող ազմուկ, և անդնդախոր ձորի մէջ գահավիժւող գետակի խօսուն ալիքների քշիչոց...

Նրանք բնութեան այդ մեղեդիով տարւած ստէպ հայեացքները բեռում էին երկնքից պոկւող աստղերի

ակօսածիբ հուր պոչին կամ յաճախ սթափուում գըլխ-
ների վրայով սուրացող չղջիկների ճթճթոցից և դէպի
իրենց առջևը զիզզագներով մոլորակէջ ցածրացող լու-
սաստիկներն արձակած մերթ կապոյտ, մերթ ոսկե-
դոյն ֆոսֆորային լոյսից:

— Ի՞նչ հրաշալի գիշեր է... բացականչեց օրիորդը
դարձեալ շարունակելով լուռթեամբ լսել գիշերային
այդ մեղեգին, ուր այժմ միայն կեանք է ծնուում...

— Այո, պատասխանեց Բագիլեանը նոյնպէս հիա-
ցած տիեզերական այդ հարմոնիայով:

Նորից երկար լուռթիւնը առաջինը խանգարեց
օրիորդը:

— Նայեցէք հորիզոնի վրայ կուտակուած մութ
ամպերին. ու նա ցոյց տւաւ բարակ ու սիւրուն ցու-
ցամատով իրար շալակը բարձրացող ամպի կոյտեր
որ իրար վրայ հեծնելով հետաքրքիր կանդանակերպեր
էին դառնում:

Բագիլեանը լուռ նայեց նրա ցոյց տւած ուղղու-
թեամբ:

— Ի՞նչ էք մտածում, դարձեալ օրիորդը խոռվեց
տիրող լուռթիւնը:

— Մտածում եմ այս բոլորը ստեղծագործող հան-
ճարի ու նրա ստեղծածների իրար դէմ մղող պայքարի
մասին... Նայեցէք այս թփին, որ ահա այս մեծ ծա-
ռի տակ կուշ է հկել ու ծուել դէպի արևելք— դէպի
լոյսը... Իսկ այս ծառը իր վիթխարի ոստերով զրկել
է նրան այդ կենսատու լոյսից. այդ թուփն անշուշտ
մի օր սննդաքամ կը դառնայ այս հսկայ ծառի խորա-
սող արմատների ցանցերում, կը չորանայ ու մի գե-
ղեցիկ օր կը ոչնչանայ...

— Բնական օրէնքն է այդ. իսկոյն պատասխանեց
Ամալիան:

— Դժբախտաբար այո: Այդպէս են և մարդիկ: Ահա
այնտեղ ներքևում, նրանք իրար արիւնն են ձծում,
իրար յօշոտում... Բայց միթէ այդ է մարդու կոչումը...
Միթէ նա չըպիտի տարբերւի այս հասարակ ծառից: ✓
Օ՛, որքան անդուլ աշխատանք է հարկաւոր յեղաշրջե-
լու անասնացող մարդու կեանքը...

Ու նա սկսեց նայել դէպի վեր մագլցող լուսնուն:
Այդ պահուն նրա դէմքը լուսնու կաթնաման լոյսի
տակ արտայայտում էր լուռ տանջանք ու թախիծ:

Օրիորդը նայեց նրան, կարգաց այդ դէմքի վրայ
խոր վիշտ ու տանջանքի մարմնացում:

— Բայց ո՞ւմ համար է տանջում. մտածեց նա և
իսկոյն եզրափակեց:— Ոչ իրեն համար... Տարօրինակ
մարդ...

Ու նրա աչքին այնքան բարձրացաւ Բագիլեանը,
որ քիչ մնաց ցատկէր ու համբուրէր այդ վշտացայտ
դէմքը: Սակայն նա դիմադրեց կրծքի տակ յուզւած
բունն փոթորկին, թողնելով այդ՝ պատեհ հանգամանքի
ու ոտի կանգնելով ասաց:

— Գնանք՝ կուշանանք. սակայն դուք վռագեցէք,
որ նրանք չըթողնեն հեռանան կարծելով, որ մենք այլևս
չենք դնալու:

Բագիլեանն այժեամի պէս մագլցել սկսեց ժայ-
ռերից դէպի ցած: Լուսինը, որ նոր մտել էր ամպի մի
մեծ քուլայի տակ, դուրս սողաց, ժպտաց օրիորդին իսկ
մեղմ հովիկը սուրալով դէպի նրա գոհարազարդ սկանջը
փսփսաց սէր...



Բազիլեանն արդէն ժամադրուած տեղումն էր: Դեռ ոչ ոք չէր եկել: Փողոցը, ուր աղքատ կնոջ նկուղն էր գտնուում քաղաքի յետ ընկած փողոցներից մէկն էր: Տունը երկյարկանի էր, որի ներքնայարկը փողոցից չէր երևում, այնքան ցածր էր փողոցի մակերևոյթից. երկրորդ յարկի պատուհանների ներքին մասը մի ուղիղ գիծ էր կազմում փողոցի մայթերի հետ:

— Այստեղ են կենում Պատրիանները. հարցրեց Բազիլեանը այդ տան դարպասի մօտ կանգնած զընապանից:

— Ի՞նչ Պատրիան, հարցրեց դոնապանը:

Բազիլեանն սկսեց նկարագրել:

— Հա՛, ծորեց նա. — ծակ սոցիալիստը:

— Սոցիալիստ. զարմացաւ Բազիլեանը նրա արտասանած «Ծակ» բառը կրկնելով մտքում:

— Հա, աղա, նա մի քանի անգամ իր էտ ծակ սոցիալիստութեան համար նստել է բերդում: Հիմի քաղցած զկուտում է: Կնիկն է նրան պահում ողորմութիւն հաւաքելով:

— Որտեղով պէտք է գնալ նրանց մօտ:

— Ի՞նչ գործ ունիք էնտեղ:

— Ձեզ ինչ. չարացաւ Բազիլեանը:

— Ինչպէս թէ ինձ ինչ: Մի լաւ նայիր վրաս. և նա ցոյց տաւ կրծքից կախ թիթեղեայ համարը, պարանոցից թելով կապած շւին, առջևը կապած քաթանէ սպիտակ գոգնոցը և ձեռքի կարճ ու հաստ մահակը:

Այո. ես գիտեմ, որ դուք դոնապան էք:

— Իսկ մենք օրէնքով պարտաւոր ենք իմանալ գալող գնացողին: Աղա, ես հասկանում եմ. շարունա-

կեց նա կարճ լուսթիւնից յետոյ. — էտ բոլորը մի կծած կարէկ չարթէ. մի քանի տարի առաջ, էս էլ էս տան պաղաւտում ապրող, որ շունն էլ չի ապրել, սօցիալիստի խելքով էի ժաժ դալի. բայց քաղցած մնացի:

— Իսկ այժմ. հարցրեց Բազիլեանը հէնց այնպէս:

— Հըմ, այժմ... հիմի 15 մանէթ խաղէինից եմ ստանում, ուչաստկից էլ մի մի հետ նազրադ:

— Ի՞նչ նազրադ, զարմացած հարցրեց նրան Բազիլեանը:

Դոնապանն այլևս ոչինչ չըպատասխանեց, Բազիլեանն էլ չըհետաքրքրւեց, լաւ ճանաչելով այդպիսի տիպերին, միայն խնդրեց Պատրիանների մուտքը ցոյց տալ:

— Մտէք հայաթը. ծուէք աջ ու առաջին պատահած դռնով իջէք ներքև. պատասխանեց նա կոպիտ ձայնով:

— Այստեղ երեք օրիորդներ էլ են գալու. խնդրում եմ նրանց էլ ցոյց տաք. ասաց նա դարպասից ներս մտնելով:

— Կա՛ւ. պատասխանեց դոնապանը յեղնօրէն նրա ետևից խէթ խէթ նայելով: — Սրանք էլ երեկ էն փիլիպոզներըն են. փնթփնթաց նա քթի տակին. ապա երեսը դարձնելով նրանից, սկսեց թիթեղեայ մեղալը ձեռքի թևքով մաքրել ու պլպլացնել:

Բազիլեանը ցոյց տաւ ձաւքով քայլեց առաջ: Հասաւ առաջին դռան ու քարէ սանդուխտներով սկսեց ցած իջնել: Քանի իջնում էր, օդն աւելի էր գարշահոտում. երբ հասաւ վերջին աստիճանին, ծանր ու խեղդող օդը քիչ մնաց նրան շմեցնէր:

Այնտեղ մութ էր, ինչպէս ամպամած գիշերն՝

անտառում: Գրպանից հանեց լուցկին ու վառեց: Թոյլ ու աղօտ լոյսը ցոյց տաւ նրան սոսկալի մի պատկեր: Սաստիկ խոնաւութիւնից պատերը բորբոսնէլ էին, տեղ տեղ քանդուաւել, վաղուց զրկւել սպիտակ ձեփից և քմահաճօրէն ընդունել տարօրինակ ու այլանդակ նկարներ: Լուցկին մարեց: Չքացաւ անեղ պատկերը: Վառեց երկրորդ լուցկին. այս անգամ նկատեց մի փթող դուռ. մօտեցաւ այդ դռան ու կանգնեց: Վառեց երրորդ լուցկին ու տեսաւ մի երկար միջանցք, որ ներքնայարկի գերեզմանաձև սրահնէր կազմում: Շարժեց առաջ ու հանդիպեց մի շարք դռների, որոնց վրայ խոնաւութիւնից արդէն մանրիկ սև ու սպիտակ սունկեր էին բուսել:

—Ուրեմն այս կատակօմբայում շատերն են ապրում. մտածեց Բաղիլեանը վերադառնալով նախկին դռան մօտ և մատներով խփեց. սպասեց. պտտասխան չբ կար:

—Ո՞վ կայ այտեղ. ձայն տաւ վերջապէս. նրա ձայնի խուլ արձաւանքն անդրադարձաւ իրեն:

—Մահն է թագաւորում այստեղ. փնթփնթաց նա, երբ սկսեցին ծանր մտքեր նրա գլխում իրար յաջորդել: Այդ պահուն լսեց սանդուխների կողմից մանկան աղերսող ձայն:

—Մայրիկ, հաց...

—Չէ որ դուք ճանապարհին կերաք. լսեց պտտասխանը:

—Նա չոր էր. փափուկն եմ ուզում. լսեց դարձեալ մանկան տրտունջը:

Նորից տիրեց լուռութիւն:

—Նրանք են, մտածեց Բաղիլեանը և իսկոյն լուց-

կի վառեց, որ նրանք յանկարծակիի չըզան ու ձայն տաւ ներքևից:

—Իջէք, քոյրիկ, մի վախենաք, ես եմ—Բաղիլեանը:

—Աստուած իմ, ուրեմն դուք չէիք ստում: Աղաչում եմ վերև եկէք, սպասեցէք, մինչև ես ճրագը վառեմ:

Բաղիլեանը բարձրացաւ:

Կինը երեխաների հետ իջաւ ներքև: Նրանք սովոր էին մթան: Խլուրդներին նման սողացին դէպի ցած:

Նա վերևից զննում էր նրանց շարժող սուէրները խաւարի մէջ: Մի բոպէ չանցած ճրագի թոյլ լոյսը աղօտ շերտերով դուրս սողաց այն դռնից, որի մօտ նա կանգնել էր քիչ առաջ:

Այդ պահուն վրայ հասան օրիորդները ու լուռ շրջապատեցին Բաղիլեանին: Նրանք փողոցում տեսել էին մարդկային զարհուրելի ուրաւկաններ, որ դէպի այն միջանցքն էին ուղևորում: Միջանցքը կենդանացաւ: Հետզհետէ ներքև սողացին նոր նոր մարդիկ, ամենքն էլ նիհար, ամենքն էլ վտիտ ու գունատ, ամենքն էլ կմախք, ամենքն էլ ցնցոտիների մէջ, ամենքն էլ լաթերով կարկատւած կոյտերով բեռնաւորւած:

Միջանցքի հին ու փթող դռները ճանչալով բացւում էին ու ներս ընդունում աշխատանքից վերադարձողներին: Նրանց մէջ կային փայտ սղոցողներ, համատար բանւորներ, մէջքներով ջուր տանող ջրկիրներ, մաղախաւոր մուրացկաններ, որը կաղ, որը կոյր, որը չորեքթաթ, ամենքն էլ լաթերի մէջ խճճւած, ամենքն էլ գոյութեան կուռում անողորմ յաղթւածներ...

Օրիորդները կանգնած տեղում մնացել էին արձան կտրած: Նրանք իրենց աչքերին չէին հաւատում: Նոյն իսկ Բաղիլեանը քարացել էր: Նա շատ էր տեսել մաշոզ աղքատութեան ճիրաններում մարեղ մարդիկ, բայց սրանց նմաններին առաջին անգամն էր հանդիպում: Նա այդ մտքի մէջ խորասուզած ելակէտներ էր որոնում անարդարութեան թունալից այսպիսի ծովերի մէջ խեղդելու մարդկանց համար, որ սաղը ձեռքին մի ձերուկ մօտեցաւ նրանց:

Նրանք տեսան ալեզարդ մի ձերուկ, որի սպիտակ յօնքերի տակից վառոււմ էին մի ջուխտ աչքեր, խրոխտ ու համարձակ հայեացքով:

— Ի՞նչ էք ուզում ձերուկ, հարցրեց օր. Ամալիան հրկիւզած:

— Ե՞ս, ոչինչ, սակայն դուք ի՞նչ գործ ունիք մեր այս դժոխքի մէջ, ուր օձն անգամ չի համարձակուում իր պորտով ներս սողալ:

Օրիորդ Ամալիան պատմեց:

— Եւ դուք ուզում էք նրանց օգնել: Ողորմութիւն տա՛մ... Ձեր խիղճը դրանով հանգստացնե՛ր... Այսօր ես տեսայ քաղաքի անփեսայ հարսանիքը... Ամենքը ծաղկավաճառ էին դարձել... Այո, այդ բարեգործութիւնն էլ ուժեղների ստեղծածն է, որ իրենց անգործութիւնը կատարեալ լինի:

— Իսկ դուք, ձերուկ, ողորմութիւն չէ՞ք խնդրում, հարցրեց Բաղիլեանը:

— Ես, երգիչ եմ, ես նւագում եմ, այդ գազանների սիրտը փափկացնում, ուրախութիւն պատճառում և նրանք իրենց կարծիքով ինձ ողորմութիւն

են տալիս. բայց ոչ, ես աշխատանքիս վարձն եմ վերցնում:

— Ի՞նչ յիմար բաներ է դուրս տալիս, փսփսացին երկու օրիորդներն իրար ահանջին:

— Սակայն քչերն են ինձ հասկանում. շարունակեց ձերուկը չլսելով նրանց. — Դրանք օձերի չափ էլ չըկան: Օձերը կրաժշտին չեն խայթում... Ես մի չոր գլուխ եմ, շրջում եմ այսպիսի մարդկանց մէջ, նրանց իմ սաղով ուրախացնում ու լացացնում: Ես էլ պատահմամբ ընկայ այս դժոխքը. ցանկացայ այս դժբախտների սև կեանքը տանելի դարձնել, բայց ի՞նչ արժէք ունի մի կաթիլ ջուրը հսկայական հրդեհի մէջ: Մեր բնակարանն անտանելի է. վերջին երեք ամուսայ ընթացքում, մեր աշխատաւորներից ութ հոգի մեռան թողնելով մի խումբ մերկ, քաղցած ու հիւանդոտ երեխաներ: Այժմ էլ մեր ուսուցիչն է մեռնում, որի մօտ դուք պատիւ էք արել գալու:

— Է՛, գաւախներս, մենք ողորմութեան կարիք չունինք, մենք մեր թափած քրտնքի գինն ենք պահանջում, բայց չենք կարողանում ստանալ: Աշխարհս զալումներինն է... Տէ՛ք մեր քրտնքի գինը և հաւատացէ՛ք, մենք այս դժոխքից առանց ձեզ էլ կազատուենք:

Ծերուկն ապա նստելով քարին՝ խփեց սաղին: Նա աշխատանքի երգ էր երգում. անարգում ծոյլերին ու թուլասիրտներին:

Ծերուկը լռեց:

— Ուրեմն դուք այժմ ձեր վարձն էք պահանջում. հարցրին օրիորդները:

— Այդ՛ հասկացողութեան խնդիր է. ձերուկը համարձակ պտտասխան տալով ոտքի կանգնեց:

Նրանք վարձատրելով նրան իջան ներքև:

Ծերուկն առաջնորդում էր նրանց:

Նա մէկ մէկ ցոյց տալով այդ ներքնայարկում մէկը միւսից սրտածմլիկ ու դաժան պատկերներ, վերջը ներս տարաւ Պատրիանների նկուղը:

— Ահա մեր ուսուցիչը. ասաց ծերունին ու կանգնեց անկիւնում:

IV

Նրանք լուռ իրար մօտ կանգնած դիտում էին չորս բոլորը ու տեսածներին չէին հաւատում:

Սենեակը ոչ մի պատուհան չուներ: Դուռը երկու պաշտօն էր կտտարում: Սենեակի պատերը նոյնպէս բորբոսնած էին, որոնց մուգ կանաչ գոյնը ճրագի աղօտ լոյսի տակ փոխւել էր միապաղաղ կապտութեան: Յաճր առաստաղն իր սպիտակ գոյնով բացառութիւն էր կաղմում այդ ընդհանուր կանաչ ֆօնի վրայ: Դռան մօտ դրւած էր մի հասարակ սեղան, որի զարդարանքը կաղմում էին երկու բաժակ իրենց ափսէներով, քիթը կտտրած՝ առանց կափրիչի մի չայնիկ, աղամանին փոխարինող աղով լի կտտրած ափսէի մի կտոր, խոնաութիւնից աղի չորս բոլորը դեղին ջուր կապած և կոթը կտտրած ու հացի մի փոքրիկ ժանգոտած դանակ: Լամպը՝ որ դրւած էր նոյնպէս այդ սեղանի վրայ, իր թոյլ լոյսով լուսաւորելով այդ առարկաները տալիս էիր նրանց հնութեան պատկեր:

Սենեակի ձախ անկիւնում հաւաքած էր անկողինը, բաղկացած երկու հասարակ բարձից ու խոտով լի մի

օթոցից: Վերմակ չը կար: Սեղանի տակ ընկած էր այժմ պարկը, որ նրանք այսօր տեսել էին կնոջ շալակին: Երկու փոքրիկները դաշտում գէշի վրայ իջած անգղիներն պէս քրքրում էին պարկը, միջից հացի կտորներ, պանրի փշրանքներ հանում ու ազահութեամբ կլանում այդ բոլորը, չընայած մայրն աչքով, ունքով հասկացնում էր նրանց հեռանալ պառկից, բայց երեխաներն օգտւելով հիւրերի ներկայութիւնից, շարունակում էին իրենց գործը եռանդով:

Սեղանից քիչ հեռու, յատակի վրայ պառկած էր հիւանդը: Նրա այտերը սևացել, ցամքել, դուրս էին ցցւել, աչքերը մարել ու կուլ գնացել բների մէջ:

Նա նայում էր անտարբեր:

Նա արդէն աշխարհի մարդ չէր:

Ծծի երեխան էլ ընկած հիւանդի պատուած վերմակի ծայրին, նիհար թաթիկները աջ ու ձախ շարժելով, լալիս էր անդադար:

— Մարժ... Սրա ձայնը... շնջաց հիւանդը:

Կինը վերցրեց երեխային, բացեց տախտակ կլտրած կուրծքը ու թառամած ստինքը տաւ նրան: Մանուկն իսկոյն ձայնը կտրեց ու ծծել սկսեց. բայց հինգ վայրկեան չանցած, այնպէս ուժեղ ծկլթաց, որ հիւանդը հառաչելով գլուխը ծածկեց վերմակի տակ:

— Կաթ չըկայ. մըմնջաց Մարժն յուսահատ նայելով հիւրերին:

Նրանք, ամենքը սոսկալի այս տեսարանից քարացել, պապանձւել էին: Բն ղք չէր ուզում խանդարել միւսի մտածողութիւնը և դժողբի այս խորհրդաւոր թագաւորութիւնը:

— Это ужасно...! յանկարծ ճչաց Ամալիան:

Նրա աչքերը լցեցին արտասուքով:

Հիւանդը գլուխն հանեց վերմակի տակից:

— Այո, սոսկալի է. և դուք եկել էք տեսնելու սարսափի այս թագաւորութիւնը և երևի ձեր բարեգործութիւնով այս սարսափի թափերը մեղմելու... Դուք առաջինը չէք. եկել են և ուրիշները. սակայն չըթեթեւացաւ այս դարդանդ սարսափի ծանրութիւնը: Միթէ այդ միջոցներով կարելի է փրկել տանջւող մարդկութեան:

Հիւանդի ձայնը խզեց:

Ծերուկը, որ մինչ այս՝ լուռ կանգնած էր անկիւնում մօտ եկաւ ու յաղթական հայեացքով նայելով հիւրերին, ցանկացաւ հասկացնել նրանց, որ նրանք միևնոյն է չըպիտի հասկանան հիւանդին:

— Ես մեռնում եմ. շարունակեց հիւանդը ուժերն հաւաքելով. — Սակայն մենակ չեմ. մեր թիւը լէզէօն է... Ապահովեցէք անհատի միւսիսում պահանջը... Մէկի բարեկեցութիւնը մի հիմնէք միւսի դժբախտութեան վրայ:

— Հացի փշրանքներով չէք կարող սրբել մեր արցունքը: Դուք գերադասում էք ձեր տան շնիկին մեր երեխաներից... Դուք նրանց լողացնում, կարկանդակ էք կերցնում, իսկ մեր դժբախտ երեխաները հիւժուում են, մեռնում կեղտի ու քաղցի ճանկերում...

— Տեսէք, գիւղացին իր եզան սովամահ չի անում, տալիս է նրանց միշտ կուշտ կեր, որ էլ աւելի արդիւնաւոր շահագործի, իսկ մեր տէրերը, բաւական չէ շահագործում են մեզ, գոնէ չեն տալիս կուշտ փորով հաց, որ եզան պէս ուժեղ լինենք աշխատանքի լծի տակ, այլ խլում են մեր երեխաների բերնից անգամ

հացի փշրանքները, ստիպում սողալ կիսաքաղց, սպրել անա սրա նման տարտարոսների մէջ, մաշակել, հիւժուել, քայքայել, դանազան հիւանդութիւններ ձեռք բերել, որոնց թունաժայթք ալիքը և ձեզ երջանիկներիդ կպչի և ձեր շարքերիցն էլ հնձի մատաղ կեանքեր...

Նրա հազը բռնեց: Բազլիւհանը օգնութեան հասաւ, որ նա չուշաթափէր:

Նրան ջուր տւին:

Նա ուժերն ժողովելուց յետոյ, նայեց Ամալիային:

— Օրիորդ, ձեր դէմքն ինձ ծանօթ է թուում. շարունակեց հիւանդը ցածր ձայնով: — Դուք գործարանատէր Միլինեանի գուստրը չէք:

— Այո, պարոն. պատասխանեց օր. Ամալիան արցունքը կուլ տալով: — Սակայն դուք ինձ ճիշտեղից էք ճանաչում:

— Քսան տարի հաւատարիմ ծառայում էի ձեր հօր գործարանում: Ապրում էի նոյն գործարանի խոնաւ ու բորբոսնած ներքնայարկում: Այն ժամանակ, ուժեղ էի, երիտասարդ. խոնաւութիւնն ինձ չէր կարողանում յաղթել: Նա անասուած մեզ շահագործում էր: Մենք կիսաքաղց էինք. հասարակ բարւոքում խնդրեցինք: Սակայն նա ինձ որպէս խոովարարի՝ կառավարութեան ձեռքը յանձնեց:

Նրա խօսքն անցաւ. նա ուժեղ էր: Մի տարի տառապեցի բանտում: Քայքայեցին վերջին ուժերս: Վերջն ինձ բաց թողին:

Այն օրից սկսեց իմ տառապանքը:

— Իսկ դուք ձեր հայրերի ու եղբայրների ձեռքով մեզնից կաթիլ կաթիլ քամած արեան ծովերի մէջ

լող տալով, ծաղիկներ էք վաճառում, որ մեզ օգնէք:

— Կոյրեր: Չէ՞ որ դա մեր արնածաղիկն է...

Հիւանդն այնպէս ուժգին աղաղակեց վերջին նախադասութիւնը, որ իսկոյն ուշաթափեց:

Ծերուկն արագ մօտեցաւ հիւանդին և սկսեց ուշքի բերել նրան:

Նրանք այս տարօրինակ զուգադիպութիւնից ցնցուած լուռ իրար էին նայում, իսկ օր. Ամալիայի ներքին աշխարհում մի այնպիսի հուժկու փոթորիկ էր բարձրացել, որ կանգնած տեղում գողում էր:

Նրա աչքերին եկած արցունքի կաթիլները չորացան իսկոյն:

Նա նայեց Բաղիլեանին, նրա գեղեցիկ ճակատին, խոհուն աչքերին ու ասաց խաղաղ ձայնով:

— Դու իրաւացի ես... Այսօրւանից ես ուխտում եմ լինել քո ընկերը... Ահա իմ ձեռքը:

Եւ իսկոյն պարզեց ձեռքը նրան:

Բաղիլեանն սպառնում էր նայում:

— Չե՞ս հաւատում... Ահա... Եւ նա կրծքի վրայ ամրացրած սպիտակ ծաղիկները դէն նետելով՝ ասաց.

— Գնանք:

Բաղիլեանը հետևեց նրան:

— Էմմա, դու բան հասկացար սրանցից: Հարցրեց, նրանց հեռանալուց յետոյ, դեռ այնտեղ կանգնած օրիորդներից մեծը՝ փոքրից:

— Ну ишь... Չարացաւ Էմման:— Այդ Բաղիլեանը դեռ հասարակ քաղաքավարութիւն անգամ չը գիտէ... Ոամ... Գոնէ մեզ մնաս բարև ասէր, էլ չեմ ասում, որ դեռ մեզ պիտի ուղեկցէր մինչև տուն: Իսկ

դու, Նօրա, կերակակայէ՛ր, որ Ամալիան այդքան թեթևամիտ կը գտնւէր...

— Սեւագարների թիւը մէկով էլ աւելացաւ. պատասխանեց Նօրան:— Այստեղ մարդիկ կոտորում են մժղուկների նման, իսկ նրանք գնացին ճահիճ ցամաքացնելու... Հա, հա, հա, հա...

Եւ նա այնքան բարձր ծիծաղեց, որ լացող երեսխան պահ մի ձայնը կտրեց:

— Թողնենք, որ նրանք սաւառնեն օդերի մէջ, իսկ մենք մտածենք այս թշուառների մասին. սրանց օգնութիւն է հարկաւոր. մեղք են:

Նրանք, մի մի բուրլի դնելով սեղանի վրայ, դուրս գնացին:

Հիւանդը, որ վաղուց ուշքի եկած սրանց էր լըսում, արագ բարձրացաւ տեղից, գողգոջ մօտեցաւ սեղանին, վերցրեց այդ երկու արծաթ բուլիները և նետեց շէմքից դեռ ոտները դուրս չըզբած օրիորդների հտեից:

— Պարոն, գիտէ՞ք մենք ովքեր ենք... Դուք մեզ անպատում էք, դուք խիտ կը տուժէք. ես քաղաքացի լսի աղջիկն եմ, իսկ ընկերուհիս՝ Բարեգործական ընկերութեան նախագահի: Դիմեց լուրջ կերպով Էմման հիւանդին:

— Այսպիսիներին ողորմութիւն տալը՝ յանցանք է: Վրայ բերեց Նօրան ընկերուհու թեքից քաշելով.

— Գնանք:

— Գնացէք, Աստուած ձեզ հետ. ես չեմ սարսափում. ջուրն ընկած մարդը՝ թրջելուց չի վախենում. պատասխանեց հիւանդը դառնալով իր տեղը:

Մարօն՝ որ մինչ այդ իր ամուսնու արարմունքի

վրայ ապշած արձանացել էր անկիւնում, արագ դուրս գալով սինեակից և յետևիցը դուռը քաշելով սկսեց միջանցքում բուրլիները որոնել:

— Աստուած իմ... Ո՞վ է ճշմարիտը... Որքն լսել... մըմնջաց նա բուրլիները գտնելուց յետոյ:

— Քաղցի հզօր ուրեականին, որ ստիպում է մեզ սողալ... Նկատեց ծերուկը, որ խաւարի մէջ կանգնած և մտքերի մէջ խորասուզւած, աշխատում էր հիւանդի քիչ աւաջ կատարած քայլի մասին վճիռ կայացնել...

— Միևնոյն է, նրան չեն հասկանալ... դէպի իր սենեակն ուղևորւելով, փնթփնթաց ծերուկը քթի տակին:

— Այդպիսիները միշտ մենակ կը մնան... Իսկ մենակների տեղը՝ խաչն է ու Գողգոթան...

1912 թիւ, 10 մայիսի:



У.С.Р.А. ШОЛОНГУУ БИОМОНГОЛ
7/21 1922
У.С.Р.А. ШОЛОНГУУ БИОМОНГОЛ

Նոյն նեղինակի աշխատութիւններից

- 1) Խեղագարի կտակը 40 կոպէկ
- 2) Տանջւած սրտեր 40 կ. (սակաւաթիւ)
- 3) Ընտրութեան օրը Գերմանիայում 5 կ. (թարգմ.)
- 4) Էսքիզներ 15 կ.
- 5) Կառապան Սմիճն 2 կ.
- 6) Արնածաղիկը 10 կ.

Կարելի է ձեռք բերել գրավաճառների ճօտ և
Հայկ Տէր-Աստուածատրեանի «Էսպերանտօ» տպարա-
նում. — Քիֆլիս՝ Երիզուհտինսկ. 17.

ՀՀ Ազգային գրադարան



NL0360025

49464